

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարերի պատասխաններ

10-րդ դասարան

1. Հայ գրականության Ոսկեդարի անգերազանցելի նվաճումը հայ գրերի գյուտն էր, որով մեր քաղաքակրթության տաճարի ճակատին դաջվեց հայերեն թարգմանված առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստոթին և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Սողոմոն Իմաստունի այս պատգամը դարձավ **հայերենի առաջին ուսուցչի** ոչ միայն հավատո հանգանակը, այլև սերունդներին տված առաջին դասը: Մերոպ Մաշտոցը հայ գրերը երկնեց Հայաստանի համար չափազանց բախտորոշ ժամանակներում: Անդեկ ու անտերունչ մնացած Հայաստան աշխարհի միակ փրկությունը սեփական գիր ու գրականություն ունենալն էր, որին էլ ձեռնամուխ եղան հայոց Վռամշապուհ թագավորը, Սահակ Պարթև կաթողիկոսը և զինվորականությունից հրաժարված, «միայնակեցական կարգի մեջ մտած» և իշխանական ցանկություններից հրաժարված Մերոպը՝ Տարոնի գավառի Հացեկաց գյուղի կարճագատ Վարդան Երանելու (Մաշտոցի վարքագիր Կորյունի բնորոշումն է) հանճարեղ զավակը: Հայ մեծ գյուտարարի կերպարին անդրադարձել են մեր գրականության բոլոր դարերի երախտավորները՝ սկսած Նրա աշակերտ Կորյուն Երանելուց մինչև մեր օրերի բանաստեղծները: Կորյունի «Վարք Մաշտոցի» վարքագրությունը տալիս է Մաշտոցի ամբողջական կենսագրությունը. ուսումնառություն, արքունի դիվանի քարտուղար, զինվորական, ապա ապաշխարող ճգնակյաց և հայոց գրերի արարիչ: Կորյունը, ըստ էության, կերտել է հայ կրթական, լուսավորչական գործչի, գաղափարական հերոսի կերպարը՝ ամենայն մանրամասնությամբ ներկայացնելով նրա գործունեությունը: Մաշտոցի կերպարին անդրադարձել է նրա աշակերտ Քերթողահայր Խորենացին՝ նկարագրելով գրերի գյուտի ստեղծման հրաշքը և իր դառնաղի կսկիծը ուսուցչի մահվան պատճառով: Մաշտոցի կերպարին անդրադարձել են Ղազար Փարպեցին, Կաղանկատվացին, Սահակ Պարթևը, Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Վարդան պատմիչը, Թովմա Արծրունին և բազմաթիվ այլ երախտավորներ: 1913-ին Միամանթոն գրեց «Սուրբ Մերոպ» հրաշալի պոեմը՝ ներկայացնելով մեծ Ուսուցչի համապարփակ կերպարը: Պոեմը հերոսական օրհներգ է՝ ձոնված հայոց այբուբենն ստեղծողին՝

ՈՎ ՀՐԱՇԱԼԻՔ, ով **հաւատքի աննիւթական հուր**,

Ով **գարմանագործ զօրութիւն**, ով **անլոյծ խորհուրդ**

Օշականի ամենասուրբ գերեզման, **Օշականի անհուն մեռեալ**,

Դուն բիրաւոր ճիւղերով **ոսկեհոս գետ գիտութեան**

Մտքի փրկիչ, յոյսի Հսկայ... Օշականի վսեմական վարդապետ...

Մաշտոցի կերպարին է անդրադարձել Պարույր Սևակը իր «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմում՝ տալով **Օշականի սուրբ ննջեցյալի** անձի ու գործի համապարփակ

զնահատականը՝ **Եվ պատահական չէ, որ գործից հետո միշտ էլ լեզուն են մարտադաշտ հանում...** **Ծնվեց, որ ծնվենք, եղավ, որ լինենք և անմահացավ, որ անմահանանք....** Բոլոր ընդգծվածները շրջասույթներ են:

2.X դարը իրավամբ համարվում է խաղաղության և վերածնության շրջան. 100-ամյա խաղաղության շրջանը մեզ տվեց Անի ու Աղթամար, Նարեկավանք ու Երեբոյք, տվեց վերթնումի սլացք ու աստվածախույզ մարգարե: Դա դարն էր Բագրատունիների հարստության, կառուցման ու արարման: Այդ դարում ավարտվեց մեր ժողովրդական անկրկնելի վիպասքը. հայ ժողովուրդը անցավ ստեղծագործ աշխատանքի՝ արարելով ոչ միայն մարմնավոր ու շոշափելի հրաշքներ, այլև հոգևոր գանձեր, համարձակ միտք: Թոնդրակյան շարժումը նախագծեց մարդու իրավունքների հաստատումը: Կախարդական մանրանկարչական կտավներում ծաղկեցին սիրո ու վայելքի պատկերներ: Եթե առաջադեմ Եվրոպան միայն 2-3 դար հետո «հանդգնեց» պատռել միտքն ու ցանկությունները կաշկանդող վարագույրը, ապա հայ ժողովուրդը ,ի դեմս իր հանճարեղ զավակի, դա արեց X դարում: Ծնվեց **«անմատչելի հեռավորն ու անընդմիջելի մերձավորը»**, որպեսզի Աստծու հետ խոսի հավասարի իրավունքով: «Նարեկացին նման է հորիզոնի, որքան հեռանում ես իրենից, նույնքան մոտենում է ինքը, և ինչքան մոտենում ես իրեն, այնքան հեռանում է նա՝ մնալով միշտ անհաս ու անմատույց, երբեք չփոքրացող և միշտ բացարձակվող»: Պարույր Սևակն է ասույթի հեղինակը, որը միաժամանակ գծել է նարեկյան ծովի երեք ափերը՝ մեղանչել եմ, կորչում եմ, փրկիր: Նարեկացին իր վրա է վերցնում համայն մարդկության մեղքը և անասելի կորստից փորձում է փրկել Աստծու իսկ կերպարով ստեղծված մարդուն: Նա փրկություն է աղերսում բոլոր 95 գլուխներում՝ **ի խորոց սրտի**: Կորստից փրկվելու համար նա աղերսում է Աստծուն՝ **բնակվիր իմ մեջ և միացիր ինձ**: Ահա մյուս ափը, իսկ երրորդ ափը՝ **գրվածքն այս դրոշմիր որպես արձան հավիտենական**:

Հայոց եկեղեցին Նարեկացուն սրբերի շարքն է դասել XII դարում: 2015-ին Վատիկանը ճանաչեց մեծ Աստվածախույզ- մարդախույզի մեծությունը և՝ **Նարեկացին դասվել է տիեզերական սրբերի շարքը, Վատիկանում տեղադրված է նրա արձանը**:

3. Առակը բանահյուսական հնագույն տեսակներից մեկն է, որ հետագայում դարձել է գրական ժանր՝ հարստացնելով մեր գրականությունը: Հնագույն առակներից հայտնի են հույն ստրուկ Եգոպոսի առակները, Աստվածաշնչից հայտնի են Հիսուս Քրիստոսի առակները, տարածված են եղել Խիկար Իմաստունի գրույցները: Հայ իրականության մեջ առակը ծանոթ է եղել դեռևս V դարի մատենագիրներին: Հայ իրականության մեջ առակը հիմնավորապես զարգացավ XII-XIII դարերում: Վկայություններ կան, որ այն որպես առանձին դասընթաց՝ առասպելաբանություն, ուսուցանվել է հոգևոր դպրոցներում: Բոլոր քարոզիչներն ուսումնասիրում էին առակ գրելու և մեկնաբանելու արվեստը, քանի որ այն լավագույնս նպաստում էր ճարտասանական հմտությունների զարգացմանը: Հայ արձակի լավագույն էջերից են Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու

առակները, որոնց մեծամասնությունը հետագայում մշակվել է մեր մեծերի կողմից: Առակ բառը ստուգաբանվում է՝ առ ակն՝ աչքի առաջ, ասել է, թե մեր առակագիրները խոսել են իրենց տեսածի մասին, միայն թե այլաբանորեն՝ կենդանիների, բույսերի, երկնային մարմինների միջոցով են բացահայտել մարդկային արատները: Կան նաև ուղղակի մարդկային կերպարներ՝ քահանա, այրի կին, զինվոր և այլք, որոնք ապրել են տվյալ իրականության մեջ, և ժողովուրդը ճանաչել է նրանց: XII-XIII դարերը հայ գրականության մեջ համարվում են առակագրության դարաշրջան, քանի որ մեծ առակագիրների՝ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու շնորհիվ այն իր պատվավոր տեղն զբաղեցրեց հոգևոր դպրոցների դասընթացում՝ որպես առասպելավարժություն: Գոշի և Այգեկցու առակները մեզ են հասել ամբողջությամբ: Գրի՛ր Վարդան Այգեկցու առակներից մեկը և մենաբանի՛ր: Չմոռանաս, որ առակը բարոյախրատական իմաստով այլաբանական գրույց է:

Հինգ առակագիրներ՝ Եզոպոս, Խիկար Իմաստուն, Մկրտիչ Կորյուն, Խնկո- Ապեր, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Հովհաննես Շիրազ և այլք:

4. Հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ ու մանկավարժ Խաչատուր Աբովյանը մեր անմար փառքերից է, մեր մեծագույն ուսուցիչը, ով իր գործով ու կյանքով անգուգական օրինակ դարձավ հետագա սերունդների համար՝ հավատարիմ մնալով իր դավանանքին՝ «Չիք իմ այլ նպատակ առաջի, եթե ի հայրենիս մեռանիլ, վասն հայրենյաց մեռանիլ»: Այս դասն ու պատգամն է ավանդել նա գալիք սերունդներին: Այսօրվա սերունդը մենք ենք, և մենք պետք է անմնացորդ նվիրվենք Աբովյանի գաղափարին՝ դառնալով մեր լեզվի, մեր հայրենիքի աննկուն ու աննահանջ զինվորներ: Իր հանրահայտ «Վերք Հայաստանի» վեպում նա խնդրելու պես պահանջում է. «Տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն , ձեր հավատը դայիմ բռնեցեք», «Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը»: Ուրեմն՝ հավատարիմ մնանք մեծ հայրենասերի պատգամին, սիրենք մեր հայրենիքը ու սովորենք մեր լեզուն. չէ՛ որ մեծ լուսավորիչն է փաստում՝ «Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ՝ քնած տեղս էլ ինձ ասում էին, որ ես իրանց որդին եմ, Եվրոպա թե Ասիա՝ ինձ ասում էին, թե ես Հայկա գավակն եմ, Նոյան թոռը, Էջմիածնա որդին, դրախտի բնակիչը»: Մեծ մանկավարժի այս դասերն էին յուրացրել մեր հայրենիքի նորօրյա պաշտպանները Արցախում, Սյուիքում, Գեղարքունիքում, Վայքում՝ Հավատարիմ մնանք մեր ուսուցչին և մեր հայրենապաշտ զինվորների սիրանքին: «Էրեխե՛ք, ձեր ջանին մեռնիմ, ձեզ եմ ասում իմ դարդը, ձեզ համար եմ գրում, ձեր երեսին դուրբան, հողումն էլ ըլիմ, էկե՛ք, վրե՛ս կանգնեցե՛ք, թե ազգասիրությունն ու հայրենասիրությունը ձեզ վնաս տա, անիծեցե՛ք ինձ, թե օգուտ՝ օրհնեցե՛ք ու լսեցեք ձեր ընկերների լացն ու սուգը, նրանց հորնըմոր կսկիծն ու ձեր հորնըմոր ծոցումը դինջ հանգստանալիս՝ ասածներս մտքըներդ բերեք»:

Մրանք են մեծ լուսավորիչ- հայրենապաշտի դասերը, որ պետք է սովորենք ու իրագործենք:

Գնահատման չափանիշները /10-րդ դասարան/

1-ին հարց 1 ենթահարց՝ 4 մ. 2 ենթահարց՝ 1 մ.	2-րդ հարց 1 ենթահարց՝ 1 մ. 2 ենթահարց՝ 1 մ. 3 ենթահարց՝ 3 մ.
3-րդ հարց 1 ենթահարց՝ 1 մ. 2 ենթահարց՝ 1 մ. 3 ենթահարց՝ 2 մ. 4 ենթահարց՝ 1 մ.	4-րդ հարց 1 ենթահարց՝ 3 մ. 2 ենթահարց՝ 2 մ.